ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

25.03.26թ. N 02/16.4/4903-2026

«ԱՐՍԵՎ» սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերության տնօրեն
պարոն Առաքել ԱԴԱՄՅԱՆԻՆ
էլ.փոստի հասցե՝ ar-adamyan@rambler.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը միակողմանի (ամբողջությամբ) լուծելու մասին

Հարգելի պարոն Ադամյան

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և «ԱՐՍԵՎ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև 2021 թվականի սեպտեմբերի 30-ին կնքվել է ՀՀ Գեղարքունիքի մարզի «Ներքին Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մասնաշենքերի կառուցման աշխատանքների կատարման N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/6 գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի շրջանակներում Ընկերությունը ներկայացրել է պայմանագրի և որակավորման ապահովման բանկային երաշխիքներ, որոնց իսկության ստուգման նպատակով Պատվիրատուն «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ից (այսուհետ՝ Բանկ) պարզել է, որ Պատվիրատուին ներկայացրած երաշխիքներից միայն մեկն է թողարկվել Բանկի կողմից:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 33-րդ կետի 8-րդ, 12-րդ ենթակետերի և Պայմանագրի 8.3 կետի պահանջները՝ Պատվիրատուն Ընկերության հետ կնքած Պայմանագիրը 2026 թվականի մարտի 25-ից միակողմանիորեն լուծում է:

Համաձայն Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի՝ Պայմանագիրը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումը 2026 թվականի մարտի 25-ին կտեղադրվի տեղեկագրում, որին հաջորդող տասներորդ օրացուցային օրը կկայացվի

Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումն Ընկերությանը գնումների գործընթացին իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու մասին: Որոշումը կայացվելուն հաջորդող օրն այն գրավոր կտրամադրվի լիազորված մարմնին և Ընկերությանը:

Հարգանքով՝
պարտականությունները կատարող

Ստորագրող
ԿԱՐԵՆ ԱՆՏՈՆՅԱՆ
1810760100

2026-03-25 09:31:39 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ՔԿ ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական
հաշվառման վարչության պետ Հասմիկ Բաղինյան, Հեռ: 011621822
Կատարող՝ գնումների կազմակերպման
բաժնի պետ՝ Արայիկ Մնացականյան, Հեռ: 011621722